ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էդմոնդ Հովհաննիսյան Վահեի Ա/Ձ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/204 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Boob Manufactures	Աշխատանքային համազգեստի լրակազմը /36-60 չափսի/ բաղկացած է աշխատանքային բաճկոնից (թվով 1 հատ), տաբատից (թվով 1 հատ), կեպիից (թվով 1 հատ), ժիլետից (թվով 1 հատ), անձրևապաշտպան հագուստից (թվով 1 հատ)։ Բաճկոնը, տաբատը կարվում է երկու գույնի, ջրակայուն կտորների համադրությամբ՝ գույները նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ։ Բաճկոնի ձևվածքն ուղիղ ուրվագծով է։ Առաջամասը մշակվում է ձևավոր, մի քանի կտորանի կոկետկայով։ Բաճկոնի բոլոր միացման կարերը մշակված են 5 թելանի մեքենայով։ Թևատեղերը և ուսի կարերը մշակվում են զույգ կարերով։ Բաճկոնը երկլանջ ծալովի օձիքով է։ Օձիքի վրա պիտակ՝ տեսականու չափսի մասին նշումով։ Թևքերը՝ ներկարված են, դաստակի հատվածում առնվազն 4 սմ լայնությամբ մանժետով, որը կոճկվում է մեկ օղակ կոճակով։ Բաճկոնը կոճկվում է սև գույնի առնվազն 22 մմ տրամագծով կոճակներով (7կոճակ)։ Բաճկոնի ներքևի կողային հատվածում առկա է երկու վրադիր գրպան։ Գրպանների մուտքի ձևածքը շեղ է, մուտքի հատվածը մշակված է 3սմ լայնությամբ երիզներով։ Կողային վրադիր գրպանների մուտքը առնվազն 18 սմ լայնությամբ է։ Բոլոր գրպանների գարդակարերը արված են զույգ կարով։ Գրպանը փակվում է կպչունային փականով։ Բաճկոնի փեշը մշակված է առնվազն 4սմ լայնությամբ մանժետով։ Կողային հատվածներում տեղադրված են 3–4սմ

		լանությամբ էլաստիկ ժապավեններ: Բաճկոնի մեջքի մասում բարձրորակ տպագրական ներկով դաջվում է ««Աջափնյակ»» գրառումը: Տաբատը ուղիղ ձևվածքի է: Գույնը համաձայնեցնել պատվիրոտուի հետ: Տաբատն առջևից ունի առնվազն 2 կողային գրպաններ: Կողային վրադիր գրպանների մուտքի ձևաածքը շեղ է, մուտքի հատվածը մշակված է նեղ երիզով և կանտով: Տաբատի կողային և գրպանի կարերը կարված են զույգ կարերով: Տաբատի գոտին առնվազն 4 սմ լայնությամբ է, որի վրա կա առնվազն 6 կամրջակ՝ գոտին անցկացնելու համար: Առաջամասը կոճկվում է նեյլոնե շղթայով և առնվազն 22մմ տրամագծով կոճակով: Տաբատի գոտու մեջ տեղադրված է 3.5 - 4 սմ լայնությամբ էլաստիկ ժապավեն՝ շիբլետանման ռեզին՝ նախատեսված տաբատի չափսն կարգավորելու համար: Կեպի- կարվում է ներսի մասում ինքնասոսնձվող ոչ գործվածքային կտորից, ուժեղացված գլխարկահովհարով, դիմային հատվածում դաջման եղակակով ««Աջափնյակ»» գրվածքը: Լուսանդրադարձնող ժիլետ- Երկշերտ լուսաանդրադարձնող ժապավեններով, բաղադրությունը՝ 100% պոլիէթիլեն, խտությունը առնվազն 120գ/մ², միջին քաշ առնվազն 0.14 կգ: Բաճկոնի մեջքի մասում բարձրորակ տպագրական ներկով դաջվում է ««Աջափնյակ»» գրառումը, իսկ կրծրավանդակի աջ հատվածում բարձրորակ տպագրական ներկով դաջվում է Երևանի քաղաքապետարանի տարբերանշանը: Անձրևապաշտպան հագուստ- Միանման անձրևանոցներ թափանցիկ ջրակայուն կտորից (100% սինթետիկ), չափը՝ մինչև ծնկներ, գլխարկով՝ կապիշոն, թևերով: Մինչև ծնկները կոճկվող: Հագուստի կարերը լինեն սոսնձված սիլիկոնե սոսնձով: Հեշտությամբ հագնվում է ցանկացած հագուստի վրայից: Փաթեթավորումը կատարվում է թափանցիկ պոլիէթիլենային տոպրակով: Մեկ տոպրակի մեջ 1 լրակազմ: Տոպրակները պիտակավորված են, որոնց վրա նշված է տեսականու չափսը, անվանումը, քանակը: Չափսերը և քանակները նախօրոք համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Ապրանքը պետք է լինի նոր չօգտագործված: Ապրանքի մատակարարումը և բեռնաթափումը կատարում է մատակարարը իր հաշվին

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Эдмонд Оганесян Вагеевич И/П в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/204 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	наименование производителя	технические характеристики
1		